ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Հայոց պատմության հարցեր» գիտական պարբերականում հրատարակվում են Հայոց պատմության հին և միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջաններին նվիրված հոդվածներ: Պարբերականում հոդվածները հրատարակվում են անվճար՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն և այլ եվրոպական լեզուներով: Պարբերականը լույս է տեսնում տարեկան երկու անգամ:

Հեղինակները հոդվածները կարող են ներկայացնել ընթացիկ տարվա առաջին համարի համար մինչև մայիսի 15-ը, իսկ երկրորդ համարի համար՝ մինչև նոյեմբեր 15-ը: Հոդվածները հարկ է ուղարկել hayotspatmutyanhartser@gmail.com էլ. փոստին, կամ ներկայացնել խմբագրություն՝ Երևան՝ Մարշալ Բաղրամյան պող. 24/4: Ներկայացված բոլոր հոդվածներն ուղարկվում են կույր գրախոսության: Հոդվածի մերժման կամ վերախմբագրման ուղարկելու դեպքում հեղինակը տեղեկանում է պարբերականի էլեկտրոնային փոստի միջոցով: Խմբագրությունը երաշխավորում է գրախոսի անվան գաղտնիությունը: Գրախոսությունները կատարվում են խմբագրության կողմից տրամադրված հատուկ ձևի վրա՝ գրախոսի ստորագրությամբ հաստատված: Հրատարակման մասին որոշումն ընդունվում է խմբագրակազմի անդամների կողմից հոդվածներին ծանոթանալուց հետո՝ խմբագրական խորհրդի նիստում: Հոդվածի տպագրությունից առաջ հեղինակը ծանոթանում է պարբերականի ընթացիկ համարի էլեկտրոնային տարբերակին՝ տալով իր համաձայնությունը:

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ներկայացվող աշխատությունները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.
Համապատասխանեն պարբերականի ձևաչափին (թեմա, ոճ, գիտական համակարգ):
Նախկինում հրատարակված չլինեն և բովանդակեն որոշակի նորույթ:

Կառուցվածք - Առաջին էջի վերին աջ անկյունում հարկ է նշել հեղինակի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, կոչումը, աշխատատեղը, էլ. փոստի հասցեն: Հոդվածի վերնագիրը և հեղինակի անուն ազգանունը և հայրանվան սկզբնատառը նշվում են մեծատառերով: Վերոհիշյալ տվյալները նշվում են նաև ամփոփումներից առաջ: Հոդվածները պետք է շարադրված լինեն ըստ կառուցվածքային բաժանման. ներածություն, առնվազն երկու վերնագրված ենթակետ՝ հստակ արտացոլված խնդիրների քննարկմամբ, եզրակացություններ, ինչպես նաև ամփոփումներ՝ հայերեն հոդվածի դեպքում ռուսերեն և անգլերեն լեզուներով (150-250 բառ): Օտարալեզու հոդվածի դեպքում հարկ է ներկայացնել հայերեն և համապատասխանաբար ռուսերեն/անգլերեն ամփոփումներ: Ամփոփումները պետք է հանդիսանան տեքստի սեղմ բովանդակությունը: Յուրաքանչյուր ամփոփման վերջում, ինչպես հոդվածի վերնագրից հետո, հարկ է նշել համապատասխան լեզվով բանալի բառեր (7 բառ):

Տառատեսակ - Հայերեն տեքստի տառատեսակը **GHEA Grapalat** (տեքստը և ամփոփումները **11,5**, հղումները **9** կետաչափով), օտար լեզուների պարագայում՝ **Times New Roman:**

Չափեր - Ներկայացված հոդվածները և հաղորդումները պետք է ունենան առավելագույնը 12 էջ ծավալ (A 4 ձևաչափ, լուսանցքները՝ 3 վերև, 3 ներքև, 2 աջ-ձախ, միջտողային բացվածքը՝ 1.5)՝ ներառյալ ամփոփումները և գրականությունը: Գրախոսական և տեղեկատվական բնույթի նյութերի ծավալը չպետք է գերազանցի 5 էջը:

Հղումներ - Տողատակում տրվում են՝ հեղինակի ազգանունը, աշխատության հրատարակման տարեթիվը և էջը (օր.՝ **Ղազարյան. 2010, 65**): Հաջորդական անուններն անջատել ստորակետով: «Նշվ. աշխ.», «Նույն տեղում» և «Տե՛ս» կապակցությունները չօգտագործել: Ծանոթագրությունները նույնպես արվում են հղումների սկզբունքով:

Գրականության ցանկ - Ամբողջական ցանկը նշվում է տեքստից հետո՝ այբբենական հերթականությամբ՝ հեղինակի ազգանունը, անվան սկզբնատառը, տարեթիվը, վերնագիրը, հրատարակության վայրը, հրատարակչության անունը, էջաքանակը (օր.՝ **Աբեղյան Մ.** 1966, Հայ վիպական բանահյուսություն. «Սասնա Ծռեր», Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 573 էջ): Պարբերականների պարագայում նշվում են միայն հրատարակման վայրերը: Օգտագործված գրականության ցանկը հարկ է ներկայացնել հետևյալ հերթականությամբ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն նն: Համացանցային հոդվածների և կայքերի հասցեները բերել ամբողջական:

Նկարներ, աղյուսակներ և քարտեզներ - Ընդգրկելու դեպքում դրանք պետք ունենան առնվազն 300 խտություն (300 dpi): Հոդվածում նկարները, աղյուսակներն ու քարտեզները անհրաժեշտ է համարակալել ու վերնագրել: